ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13> հոկտեմբերի 2014թ
Ք. Եղեգնաձոր

N 84

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014Թ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ>> ՀՀՕՐԵՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ <<ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ>> ԾՐԱԳՐՈՎ ՀԱՏԿՑԱՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՄԱՐԶԻ <<ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետության 2014թ պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի առաջին ենթակետով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 23.10.2014թթիվ 1170- Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ա/ <<Հայաստանի Հանրապետության 2014թ պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին <<Հանրակրթական ուսուցում>> 09.01.02.01, 09.02.01.02 և 09.02.02.02 ծրագրերով հատկացված 1566018.7 հազ. դրամ գումարը բաշխել <<Հանրակրթական ուսումնական հաստատություն >> պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև ըստ մարզպետի կողմից հաստատված N 1 հավելվածի:

1. բ/ << Ներառական ուսուցում >> 09.01.02.04, 09.02.01.05 ծրագրերով՝ 38972.2 հազ.դրամ գումարը բաշխել Եղեգնաձորի թիվ 2, Վայքի թիվ 2 , Ջերմուկի թիվ 1, Ջերմուկի թիվ 3 հիմնական և Շատինի միջնակարգ <<Հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև ըստ մարզպետի կողմից հաստատված N 2 հավելվածի:

1. գ/ <<Նախադպրոցական կրթություն>> 09.01.01.01 ծրագրով հատկացված 19575.7 հազ. դրամ գումարը բաշխել <<Հանրակրթական ուսումնական հաստատություն >> պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև ըստ մարզպետի կողմից հաստատված N 3 հավելվածի:

2. Հանձնարարել մարզի <<Հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին հատկացված

գումարների շրջանակներում կազմել ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախահաշիվներ և ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչություն:

3. *Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական վարչության պետի վրա:*

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ